

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԵՐ:

Ելեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և Նշել անհրաժեշտ տվյալները:



Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Утп түшілтөрө – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԾՈՒՑԻ ՀԱՅՈՅ
ՔԱՂՔԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ
ՕՐԲՈՒ

ՀՏՇ. 941 (479.25):325
Գ.Մ.Դ. 63.3(2Հ)+66.3(2Հ)
Ը 973

Գիտաժողովը նվիրվում է
Ծուշի ազատազրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանառու Խմբագիր՝
Արտակ Մաղալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝

Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բարխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բարեկեն Հարուրյունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Արարատ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Ը 973 ԾՈՒԾԻՆ ՀԱՅՈՑ ՔԸՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ. Ծուշի ազատազրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր. – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

Գ.Մ.Դ. 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչություն, 2007

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

**ՂԱՐԱԲԱՂ ԵՎ ՇՈՒԾԻՆ
ԽԵԲՆԱԿԱՍԼՈՒՅՑԱՆ ԱՆԿՈՌՄԵՅՑ ՀԵՏՈ
(1917 թ. ՄԱՐՏ-ՀՈԿՏԵՄԲԵՐ)**

Ղարաբաղի պատմության հետփետրվարյան փուլը բացառիկ է: Այն բեկումնային էր ողջ ռուսական կայսրության ու նրա ազգերի քաղաքական ապագայի առումով, ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի գործադրման ու կայունացման, անկախության գործընթացի տեսանկյունից:

Ղարաբաղի համար փետրվարյան հեղափոխությունը դրսերպեց որպես յուրահատուկ կապող օդակ 18-րդ դարի հումկու ազատագրական շարժման և 1988-ի համահայկական ընդվզումի ավանդույթների ու պայքարի ձևերի միջև: Ինչպես 1917 թվականին ցարիզմի, այնպես էլ 1988-ից՝ գորբաչովյան վարչակարգի նեմ ծավալվող պայքարում ազգային և ժողովրդավարական մարմինների ստեղծումը ուղենիշ հանդիսացավ ոչ միայն 1917–1921 թթ. իրադարձությունների, այլև Արցախյան ազատամարտի համար:

Եվ վերջապես, 1917 թ. ևս փայլեց Վարանդայի Մելիք-Չահնազարյանների գերլաստանի աստղը: Նրանց թվում էին գեներալ-մայոր, գեներալ-լեյտենանտներ Նիկիտա, Նիկոլայ, Միքայել, Պավել Մելիք-Չահնազարյանները: Արշակ Մելիք-Չահնազարյանը Ռուսաստանի հողագործության մինիստրի տեղակալն էր, Սամսոնը զոհվեց 1920 թ. Շուշիի մարտերում, Անդրեյը ՀՀ քանակում հեծյալ գնդի հրամանատար էր, Շուշիի քաղաքագլուխն էր Գերասիմ Մելիք-Չահնազարյանը:

1917 թ. Փետրվարյան հեղափոխության, ցարի հրաժառականի լուրերը մարտին հասան նաև Ղարաբաղ:

Ամբողջ երկիրը, այդ թվում և Հայաստանը ուշադրութ-

յամբ հետևում էին Պետերբուրգի ամեն մի քայլին, երբեմն արձագանքներն առավել բուռն և արմատական կերպարանք էին ծեռք բերում, քան կենտրոնում, այնուամենայնիվ տիրապետողը մնում էր սպասողական տրամադրությունը:

Մարտի 6-ին ժամանակավոր կառավարության նախագահ իշխան Գ. Լվովին, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարին ու Թիֆլիսի քաղաքագլխին միաժամանակ ուղարկվեցին Շուշիի քաղաքագլուխ Գ. Սելիբ-Շահնազարյանի հեռագիրը, որոնք խոստանում էին պահպանել «անխախտ հանգստություն»: Առաջին օրերը նշանավորվեցին նաև աշակերտական ցույցով, որն արժանացավ քաղաքագլխի ինչ-որ տեղ հարկադիր ողջունին և ի վերջո Մեծին հրապարակում վերածվեց հանրահավաքի¹:

Դեղափոխությունից հետո երկրում ստեղծվեց Երկիշխանություն: Դայաստանում Անդրկովկասյան հատուկ կոմիտեի Օգակոմի ձևավորումից հետո կազմավորվեցին նահանգային, գավառային, քաղաքային և գյուղական գործադիր կոմիտեներ: Ըստ իրենց զանգվածային ընույթի և համընդիանուր տարածման, այս մարմինների հետ 1917 թ. սկզբում չեր կարող մրցել և ոչ մի հասարակական-քաղաքական ինստիտուտ:

Դարաբաղում մարտի 13-ին ձևավորվում է Շուշիի ժամանակավոր գործադիր կոմիտեն, որի գործունեության շրջանակն ընդգրկելու էր Շուշիի, Կարյագինոյի, Ջևանշիրի, ինչպես նաև Ջանքեզուրի գավառները: Այս փաստը մասամբ լուսաբանում է այն կարևորագույն իիմնահարցը, թե վարչական-տարածքային առումով ինչ էր իրենից ներկայացնում Շուշիի գավառը, Ղարաբաղ պատմական հասկացությունը 1917 թվականին: Նշենք, որ մինչև հեղափոխությունը Ղարաբաղը մտնում էր Համախու, հետո էլ Ելիզավետպոլի նահանգների կազմի մեջ:

Երկիշխանությունը Ղարաբաղում դրսնորվեց այլ ձևով:

¹Տե՛ս Փայլակ, Շուշի, 1917, 9 մարտի:

Այստեղ գործող զինվորական պատգամավորների խորհրդին և Ղարաբաղի գործադիր կոմիտեին զուգահեռ, գործում էր նի երրորդ մարմին՝ Շուշիի գավառական կոմիսարիատը: Վերջինիս բնորոշ դրական պահպանողականությունը փոխանցվում էր նաև քաղաքային դրումային:

Շուշիի մենշևիկների «Փայլակ» թերթը գրում էր. «Մեր սոցիալ-քաղաքական հայացքներով, միանգամայն հակառակ լինելով Ղարաբաղի նորակազմ կոմիտեի մեծամասնություն կազմող անդամներին, մենք այնուամենայնիվ ընդունում ենք առայժմ նրա իրավասությունն ու իշխանությունը, իբրև Գերագույն ժամանակավոր կառավարության մի մասնիկ ու նրա ենթակա մի մարմնի, որ հանձն է առել Ղարաբաղի կյանքը դրուս բերել նոր պետական ու քաղաքական ճանապարհի վրա: Դայ մենշևիկները Ղարաբաղում փաստորեն իշխանությունը թողնում էին տեղի ազդեցիկ բոլոժուազիայի տնօրինությանը, ստանձնելով միայն վերահսկողության պարտականությունը:

Օգակոմի օբյեկտիվորեն ձևավորվող անկարողությունը, որը ժամանակին որակվում էր որպես «անիշխանություն», իր արտացոլումը գտավ նաև Ղարաբաղում:

Դայտնի է Պետերբուրգի Պետական խորհրդի քարտուղարի օգնական հայագի Եվանգուլովի «Դաշվետու գրությունը» մինիստր նախագահին Օգակոմի գործունեության և նրա վերակազմության անհրաժեշտության մասին: Այդ փաստաթուղթը այսպես է նկարագրում անցումային շրջանը. «Ամբողջ իին վարչակարգը անմիջապես, իիարկե, վերացվեց և բնակչությունը, որը մնացել էր առանց իշխանության, թողնվել էր սեփական բախտին՝ չունենալով նույնիսկ պատրաստի օդինակներ, որոնց կարող էր նամակել, ստիպված էր հնարել իշխանության իր ձևերը»: Քաղաքներում ստեղծվեցին գործադիր կոմիտեներ՝ քաղաքային ինքնակալությունների գեմսուվումների գլխավորությամբ: Այդպիսին էր ինչն Շուշիի գավառական կոմիտեն: Երկրամասում Երկիշխանության և մասնավորապես դեմոկրատական մարմինների ամրապնդման ու կա-

յունացմանը, ըստ Եվանգուլովի, խանգարում էր վարչական ոչ ճիշտ սահմանազատումը: Որպես միակ ելք նա առաջարկում էր Կովկաս ներմուծել գեմստվային կառավարման ձևը, որը վերջին հաշվով ազգային հարցի լուծման կուլտուրազգային ավտոնոմիայի ծրագիրն էր պաշտպանում: Եվանգուլովյան վերադարձը դեպի գեմստվային շարժում դեմոկրատական հեղափոխության ինչ-որ չափով կայունացնելու քաղաքականություն էր, որով տեղական նորարության մարմինները կամրապնդեն իրենց նվաճած դիրքերը:

Այդ հակասություններն իրենց արտահայտությունը գրտան նաև Ղարաբաղի գավառանասում: Այստեղ ևս տեղական կոմիտեները պետք է ունենային ժամանակավոր բնույթ, մինչև որ կիրավիրվեր Սահմանադիր ժողովը: Նախատեսվում էր գավառական կոմիտեները բաժանել 4 աստիճանի՝ ըստ յուրաքանչյուրի գործունեության համապատասխան շրջանի: Այդպիսի կոմիտեներ ստեղծվում են Շուշիում (18 թաղերի ժողով) և գավառի աչքի ընկնող բնակավայրերում: Դրանք միաժամանակ պահպանում էին կազմավորման և գործունեության ազգային բնույթը:

Ինչ վերաբերում է խորհուրդներին, ապա Երկիշխանությունն այս իմաստով Ղարաբաղում դրակորվեց ի դեմս Ղարաբի պղնձահանքերի բանվորական պատգամավորների խորհրդի գործունեության:

Ղարաբաղի, մասնավորապես վերջինիս կենտրոն Շուշիի համար հետփետրվարյան հասարակական-քաղաքական կյանքի ակտիվացումը հիմնականում կապվեց ավանդական դարձած կրթական-լուսավորական վերափոխումների, դպրոցի ազգայնացման, դեմոկրատացման խնդիրների հետ:

Շուշիի աշակերտական միությունը մասնակցեց 1917 թ. ապրիլի 5-ին Բաքվում բացված Հայ աշակերտական համագումարին: Երևանի, Կարսի, Ալեքսանդրապոլի, Եջմիածնի, Գանձակի և Շուշիի աշակերտական միությունները այստեղ միավորվում են ընդիանուր «Հայ աշակերտական միության»

մեջ²: Միությունն իր առջև նպատակ էր դնում վերացնել «կուսակցական խլրտումները» և պաշտպանել նոր կառավարությանը: Այս տրամադրությունը իր նոր զարգացումը ստացավ մայիսի 13–18-ը Թիֆլիսում կայացած «Համընդիանուր կովկասյան աշակերտության միության սահմանադիր ժողովում»: Անդրկովկասի 28 քաղաքների ներկայացուցիչներն այստեղ փորձեցին հիմք դնել Երկրամասի բոլոր ազգությունների աշակերտության միավորման գործընթացին, որը դեմոկրատական հեղափոխության և ազատության անմիջական դրսարրումը պետք է որակել:

Դպրոցի ազգայնացմանն էր ուղղված նաև Շուշիում մայիսի 8–9-ը կայացած շրջանի ուսուցչության համագումարը, որն իր պատգամավորներն ուղարկեց Թիֆլիսում մայիսի 11-ին կայացած համագումարին: Հայ ուսուցչական համագումարը, որպես հասարակության մի հատված, լիակատար և անվերապահ վստահություն էր հայտնում ժամանակավոր կառավարության ապրիլյան ճգնաժամի արդյունքում ստեղծված կուլիցիոն կառավարությանը: Քաղաքական նույն մքնուրուտն էր տիրում նաև մայիսի 2-ին Բաքվում կայացած Համաօւսական հայ ուսանողության համագումարում, որտեղ իր կշիռն ուներ Շուշիի երիտասարդությունը: Կամսազգալով մոտալուս փորձությունների վտանգը, Անդրկովկասի ազգերի փոխհարաբերության խնդիրը քննարկելիս արտահայտվեց այն միտքը, որ ռուսաստանյան հեղափոխությունը բոլորի Երազանքն էր, և նրա անրապնդմանը պետք է նպաստեն բոլոր ագերը:

Շուշիսյան ճգնաժամը և Երկրում բոլշևիզմի ակտիվացումը Շուշիում արտահայտվեցին պարենային հուլզումներով: Շուշիսի 27-ին, ծայրահեղ կարիքից դրդված, Շուշիի չքավոր բնակչության հատվածը հավաքվեց քաղաքային շուկայում և պատրաստվում էր ավերածությունների ու խանութների բա-

²Տես Քայլեր, Գանձակ, 1917, հ. 2, մայիս:

լանի, որը ժամանակին մարեց մենշևիկների ակտիվ միջամտությամբ և փաստորեն կանխեց հնարավոր ազգամիջյան բախումը: Սենչևիկյան խաղաղության կոչը իր արտահայտությունը գտավ նույն օրը հրավիրված Ղարաբաղի գործադիր կոմիտեի արտակարգ որոշման մեջ: Նշվում էր, որ անհրաժեշտ է բարեփոխել Ղարաբաղի գործադիր կոմիտեն, քաղաքային Դուման, Պարենային կոմիտեն ու սրանց հարակից կազմակերպությունները:

Անդրկովկասի ազգային հարցի սուր խնդիրը իր վրա էր վերցրել Օգակոնը, որը սպեցիֆիկների բնութագրմամբ «իրենց միսիան ավելի շատ համարեցին ազգային, քան պետական», ինչը ենթատեքստում նշանակում էր անկարողությունից ավելի սրել ազգամիջյան հարաբերությունները:

Ժամանակավոր կառավարության հրավիրած Մոսկվայի օգոստոսյան պետական խորհրդակցության ժամանակ մենշևիկ Զիսենկելին հայտնեց, որ «Անդրկովկասի ազգերը համերաշխ են և մինչև այժմ ոչ մի սեպարատ քայլի չեն դիմել»:

Ազգային տեսանկյունից Անդրկովկասի տարանջատման հարցը բարձրացվել էր դեռ մինչև հեղափոխությունը՝ 1909 և 1916 թթ. գենստվային խորհրդակցություններում: Այստեղ հայ ներկայացուցիչները առաջ էին քաշում սահմանների վերափոխման հարցը և ցարիզմի պայմաններում ստիպված իրենց առաջինը արհեստականորեն հիմնավորում էին տնտեսական փաստարկներով, այն ինչ եղավ նաև 1921 թ., բայց արդեն բոլշևիկների հեղինակությամբ: Քանի որ ազգային տարածքային վերաբաժանումը հայերի, մասնավորապես Ղաշնակցության նախաձեռնությունն էր, ուստի վերջինս գրեթե միշտ հանդիպում էր վրաց-բաթարական արդեն ծևավորված համատեղ դիմադրությանը: Այս առումով անհիմն էին Անդրկովկասում հայերի ցրվածությունը շեշտող պատճառաբանությունները:

Ուստական բյուրոկրատիան միանգամայն հարմար էր համարում այս մասնատված վիճակը, որի պայմաններում անխուսափելի էին ազգամիջյան ընդհարումները, և հեշտանում

էր «բաժանի՛ր, որ տիրես» մարտավարությունը:

Այսպես, օրինակ, Ղարաբաղի արևելյան գավառները միացվել էին Ելիզավետպոլի նահանգի մահմեդական բնակչություն ունեցող գավառներին, Բորչալուի, Ախալքալաքի գավառները մտցվել էին Թիֆլիսի նահանգի մեջ, իսկ Կարսի ու Կաղգվանի շրջաններն անընդմեջ ուստական ենիգրացիա էր ուղարկվում: Բարենպաստ վիճակը հօգուտ Աղրբեջանի բացատրվում էր նրանով, որ այդ բնակչության նկատմամբ կիրառվում էր ոչ թե ազգային, այլ կրոնական՝ կոնֆեսիոնալ եղանակը: Թեև վիճելի տարածքները ճնշող մեծամասնությամբ բնակեցված էին հայերով, սակայն տարածքային առումով ապագա Հայաստանը կունենար 10000 կմ² տարածք՝ 230.000 բնակչությամբ, այսինքն՝ 30% բնակչություն կազմող հայերը կատանային հողային տարածքի 5%-ը, վրացիները, հավասար թիվ կազմելով հայերի հետ, ծեռք կրերեն հողի 42%-ը, 8 անգամ ավելի, իսկ բաթարները՝ 53%-ը³:

1917 թ. վրաց մենշևիկները գտնում էին, որ տարածքային ինքնավարության սահմանները հաստատվում են ըստ այս կամ այն ժողովրդի ռեալ տեղաբաշխման: Միաժամանակ հաշվի էին առնվում տնտեսական և կենցաղային պայմանները: Ազգային սահմանների փոփոխման դեպքում պետք է կիրարվեր հանրաքվե վիճելի տարածքներում:

Վրաց սոցիալ-ֆեդերալիստները դեռ 1917 թ. հասկանալի պատճառով բարձրացնում էին տարածքային ամրողականության պահպանման պահանջը: 1917 թ. ամռանը Օգակոնի խորհրդակցությունը, հակադրվելով հայկական գծին, փակուղի մտավ: Վարչական վերաբաժանումն այս անգամ էլ վերաբերում էր ոչ միայն Ելիզավետպոլի ու Երևանի, այլև Թիֆլիսի նահանգներին ու Կարսի մարզին: Նույն ճակատագրին արժանացավ նաև հոկտեմբերի 14–15-ը Զիսենկելու նախաձեռնությունը:

³ Տես Արմաно-ցրացին առաջարկական կոնֆլիկտ. Եակ, 1919, с. 3.

յամբ ժորդանիայի ու Գեղեցկորու մասնակցությամբ կայացած Օգակոմի ընդլայնված խորհրդակցությունը: Ավետիք Շահիսարունյանի արտահայտությամբ, վերաբաժնանան հարցում «հայկական նախագծի դեմ սկսվեց վրաց-թաթարական արշավը, այս անգամ որպես վարչական վերաբաժնանան դեմ արհեստականորեն ստեղծված երկարաժամկետ գենը»⁴:

Հիմնականում այսպես Ղարաբաղը պետք է ընդուներ հոկտեմբերյան հեղաշրջումը, որը դարձավ 1918–1921 թթ. իրադարձությունների գլխավոր արիթը և շարժիչ ուժը:

⁴ А. Шахатунян. Административный передел Закавказского края. Тифлис, 1918, с. 124.